# Ժ. ՅՐՈՒՑՅՆԵՐ

## 1. ՎԱՐԴՆ ՈՒ ԲԼԲՈՒԼԸ

*Ավանդաբար մեզ հասել է Մշո աշխարհի այս զրույցը վարդ ու բլբուլի մասին։*

*—Գիշերը,—պատմում էին ծերերը,—հյուսում է վարդի կոկոնը. անարատ ցողը արգասավորում է և արշալույսը իր լուսեղեն մատի ծայրի մեկ հպումով ծնունդ է տալիս գեղեցկագույն թերթիկներին։ Եվ մինչ մահկանացուներից ոչ ոք չի փորձել այդ գաղտնիքը թափանցել, միայն բլբուլն է, որ մայիսյան գիշերները, վարդենու ճյուղին թառած՝ երգում ու լալիս է անքուն հսկելով, որպեսզի մե՛կ անգամ, դոնե մե՛կ անգամ տեսնե, թե ինչպես է բացվում վարդի կոկոնը։ Բայց իզո՞ւր. երկարատև հսկելուց ու անքուն մնալուց հոգնում են աչքերը, և երբ բացման խորհրդավոր րոպեն մոտենում է, կարճատև, խիստ կարճատև մի նինջ վակում է բլբուլի աչքերը և արցունքի մի կաթիլ հոսում է վարդի կոկոնին, ու երբ բաց է անում աչքերը՝ ավա՜ղ, վարդը բացված է արդեն...*

*Խեղճ թռչունը սրտի կսկիծից թռչում դընում է հեռու աշխարհ։ բայց դարնան հետ վերադառնում է վարդի մոտ, կրկնվում են նույն անքուն հսկողությունը, նույն երգն ու լացը, բայց արարչի վճիռն անողոք է և խեղճ բլբուլը՝ մինչև այսօր չի տեսել թե ինչպես է բացվում վարդը...։*

## 2. ՈՍԿԵ ԿՌՈՒԹ[1]

*Մի անգամ թագավորը տեսնում է, թե ինչպես մի վիշապ օձ[2] մտնում է հրապարակը, մոտենալով Մեծ Սյունին քամակը տալիս և անցնում գնում է։ Թագավորի հրամանով ծառաները հետևում են վիշապին և անտառում տեսնում, որ ահա վայրի այծ է կուլ տվել, բայց այծի երկար պողերը արդելակվել են նրա կոկորդում, չի կարողանում կուլ տալ։ Վրա են հասնում, այծի կոտոշները կոտրատում և դյուրությունն են տալիս օձին։*

*Շատ չանցած՝ վիշապն երեք ոսկե կոութ բերանն առած, բերում գցում է Մեծ Սյունի մոտ ու անցնում գնում։ Հրաշալի ոսկե կռութները դառնում են թագավորի սեղանի զարդը։*

*—Վեզի՛ր,—ասում է թագավորը,—այս հրաշալի հասկերի գաղտնիքն եմ պահանջում քեզանից, երկրներ պիտի ման դաս, տարիքոտ ու խելացի մարդիկ պիտի գտնես, իմանաս գաղտնիքը և դաս ինձ տաս, թե ո՛վ է ցանել այս ցորենը, ի՞րբ է ցանել և ո՞ւր։*

*—Վեզիրը ամիսներով ճամփորդելուց և հարց ու փորձ անելուց հետո, ի վերջո մտաբերում է, որ երեք տարբեր քաղաքների մեջ երեք եղբայր ծերունիներ են ապրում, նրանք կկարողանան գաղտնիքը բացատրել։*

*Եղբայրներից առաջինը, որ բնակվում է Վան քաղաքում, 120 տարեկան էր. վեզիրին ասում է, որ ինքը ոչինչ չգիտե, պետք է տեսնել երկրորդ եղբորը, որ բնակվում է Բաղեշ քաղաքում։ Սա վեզիրին ուղարկում է Դիարբեքիր երրորդ եղբոր մոտ։ Երրորդ ծերուկը հարյուր իննսուն տարեկան էր։ Բայց մյուս եղբայրներից ավելի կայտառ, ավելի աշխույժ ու երիտասարդ է երևում։*

*—Մա՛րդ,—ասում է վեզիրը,—հեռու աշ-*

---

[1] Կռութ—լեցուն հասկ (Ժ. Բ.)։

[2] Ժողովուրդն ասում է յուշապ օձ (Ժ. Բ.)։

[1] Այս թագավորը պարսից Սասանյան արքա Անուշիրվանն է (Ժ. Բ.)։

խարՀից եմ դալիս, շատ մարդիկ եմ տեսել, հարցրել, փնտրել, և ոչ ոք չի կարողացել բավարարություն տալ խնդիրքիս։ Ասա՛ ինձ, թե այն ոսկե կոութները, որ վիշապ օձը բերեց մեր արդարասեր թագավորին, ո՞վ է ցանել, ո՛ւր և ե՛րբ։

—Նստի՛ր, դեռ հանդուցացիր, հյուրիս հանդեպ ունեցած պարտականությունս կատարեմ, այնժամ պատասխանը կստանաս։

Եվ ծերունին ասում է.

—Նուշիրվան թագավորի օրով մի գյուղացի յուր արտի երեսը վարձով է տալիս դրացուն ցանելու։ Վարձակալ դրացին արտը վարելիս մի ման լիքը ոսկի է գտնում, կանչում է արտատերին.

—Դրացի եղբայր, արտդ վարելիս, մի ման ոսկի եմ գտել. ահա ստացիր.

—Ո՛չ,—պատասխանում է արտատերը,—քանի որ արտիս երեսը ծախել եմ, իրավունք չունեմ ոսկին առնելու. մինչև հիմա հարյուր անգամ այդ արտը վարել, ցանել եմ, բայց ոսկի չեմ գտել, այդ քու բաժինն է աստված ինքը տվել։

Օրերով վիճում են, մինչև որ գործը դնում է դատարան։ Դատավորը ճարը գտնում է. վիճողների տղան ու աղջիկը ամուսնացնում է և ոսկին հատկացնում նորապսակներին։ Բայց մինչև որ դատավարությունը վերջանում է, ցանքի ժամանակն էլ անցնում է. գյուղացին միայն մեկ ակոսն էր վարել և երեք չորս հատիկ շաղ տվել արտի մեջ, որից գոյանում են ոսկե հասկերը, արմատից սկսած մինչև կոութները՝ ձույլ ոսկի...

## 3. ՇՈՒՇԱՆ ԻՇԽԱՆՈՒՀԻ

...Համաձայն ավանդության՝ Բագրատունյաց մայրաքաղաքի պարծանքներից մեկը՝ Տիկնանց տիկին Շուշանը, նաժիշտներով շրջապատված հանդիսավորապես եկեղեցի գնալու համար սկսում է հագնել թանկագին պատմուճանը, եզրածիրանին[1], միջնածիրանին և երևելի լակոնացին։ Պետք էր նաև գլխին հարմարեցներ ցանցակերպ ծամակալը, դներ խույրը, կապեր ապարոշը, ստրերն անցկացներ մեհեվանդները[1], ձեռքերին դներ ապարանջանները, մատներին՝ մատանիները, ականջներից կախեր դնդերը, կողքից կախեր հմայակները և վերջապես դնեիր ծածկեր մի շղարշով[2], որի տակից երևար ինչպես Աստղիկ աստվածուհին՝ մշուշի միջից։ Եվ մինչ նաժիշտների և օրիորդների հետ ուղում է թափորով եկեղեցի գնալ, պատգամաբերը դալիս է լուր տալու, որ պատարագն արձակվել է։

Կրկնվում էին ամեն տոն ու կիրակի օրերում «Տիկնանց տիկինի» զարդարանքի և պճնելակերպի արարողությունները. պատարագը արձակվում էր և նա գրկվում եկեղեցի գնալուց, որովհետև իշխանուհու պալատը, ասում է ժողովուրդը, բավական հեռու էր եկեղեցուց։

Ուրիշ ելք չէր մնում եթե ոչ՝ ունենալ սեփական եկեղեցի պալատին կից։ Շատ չանցած՝ մայրաքաղաք Անին զարդարվում է մի փառավոր եկեղեցիով ևս, և դա Տիկնանց տիկին Շուշանի եկեղեցին էր, ուր, իհարկե, պատարագը չէր կարող արձակվել, մինչև որ տիկինը չզարդարվեր ու ներկա չլիներ։

Անցել են դարեր, բայց հայ ժողովուրդը դեռ չի մոռացել իր զարդասեր տիկնոջը և դրա հիշատակը անմահացրել է «Մինչև Շուշանը զարդարվի՝ պատարագը կարձակվի» առածով։

## 4. ՋՐՈՒՅՑ ԿՈՓ ԳՅՈՒՂԻ ԱՆՎԱՆ

Ժողովրդական ավանդությունն ասում է, որ չորրորդ դարում Հայոց Տիրան թագավորը խեղդամահ է անում ասորի եպիսկոպոս ծերունի Դանիելին. մահանալուց առաջ նա իր աշակերտներին պատվիրում է, որ իր մարմինը դնեն եղներով լծած մի սայլի վրա

---

[1] Եզրածիրանի—ծիրանագույն քղանցքներով զգեստ. միջնածիրանի—զգեստ, որի միջի թելերը ծիրանի գույն ունեն։ Լակոնացին—թափանցիկ կտավ է։ Այս տեսակ հագուստները հագնում էին իշխանուհիները հին ժամանակներում։

[1] Մինչև այսօր էլ Մշո աշխարհի հայ և քուրդ կանայք իրենց ոտքերին կապում են սև ուլունքներ, որոնք կոչվում են սիլան հլուններ։ Տակավին կարելի է տեսնել, հատուկենտ կանայք, որոնք կրում են ոտքի մեհեվանդներ, որ ժողովրդական բարբառով կոչվում է խալխալ և շինվում է պղնձից, արույրից կամ հասարակ երկաթից։

[2] Զարդարանքի այս մանրամասնությունը նկարագրված է հայոց եկեղեցու «Մայր Մաշտոց»-ում, փոխադրված՝ Եսայի մարգարեից (Գ. 16) (Ս. Բ.)։

և թողնեն, որ սայլը գնա. ուր որ սայլի կոփին[1] կոտրվեց՝ այնտեղ էլ թաղեն իր մարմինը։ Եզները սայլը քաշ տալով գալիս են այժմյան Կոփ գյուղի տեղը, որտեղ կոփին կոտրվում է. մարմինը թաղում են կոփից ոչ հեռու մի բարձրավանդակի վրա, ուր կառուցվում է սուրբ Դանիելի վանքը, որ մինչև 1915 թվականը կանգուն էր և շեն հայկական մյուս վանքերի նման։

[1] Գյուղական սայլերի թամբի առաջ և ետև դրված և մյուս տախտակներից ավելի երկար տախտակներ (Ս. Բ.)։